

ՔԱՆԱԿԱՆՆԵՐ ԱՎԻՐՈՒԹԻՒՆ
 Պուլկարիոյ համար
 Տարեկան 12 մր.
 Վեցամսեայ 6 »
 Առջաւանակցելի համար
 Վար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Աւերիկայի համար
 Տարեկան 3 սրչ.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Մանկուցան սոցիալ առաջին
 երեսին համար 40 սանթիմ
 և 2-րդին 20 սանթիմ և 3-րդին
 10 սանթիմ (անհատական համար
 20-019 գեղջ կրկնայ)

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՅՈՒՄԱՆ ԶՈՒԿՐԵԱԲԹԻ ԵՒ ՆԱԲԱԹ ՈՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկի
 Խմբագրութեան հասցեի
 —
 Редакция на вестник
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)
 «Պուլկարիոյ համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)»

Արդէն «Շարժում»-ի եր-
 րորդ տարեշրջանը լրացու-
 տակաւին արտասահմանի մաս մը
 բաժանորդներ իրենց բաժնե-
 գիտները չեն զրկած, մանաւանդ
 ամերիկացի բաժանորդները:
 Ամբողջ տարի մը ապուսիկ թերթ
 զրկելէ հաջորդ երբ գեռ կը
 խնայենք արդէն կը կախձենք
 թէ պէտք եղածէն առաջ ազ-
 նուութեամբ վարուած կըլլանք
 մեր բաժանորդներուն հետ և
 կը փափագինք որ, բաժանորդ-
 ներն ալ շարաշար չի գործածեն
 զայն:

Խմբագրութիւն

Այդ գեղեցիկ պատկերը տես-
 նելուց յետոյ, ես մնացի զարմա-
 ցած որ մի քանի դատարկամիտ-
 ներ դէմ են այդ արուեստին,
 չեն ուզում որ հայը հրացան
 գործածել սորվի, զանազան յի-
 մար պատճառաբանութիւններով
 ուղղւած են զինավարժութեան գը-
 նաչող երիտասարդներին ոչ ոչ
 մտածած ձգտուի մը օգուտի մէջ խեղ-
 դել:

Այդ պատճառաբանութիւննե-
 րից մէկն էլ այն է որ, իբր թէ
 խուզար կառավարութիւնը զի-
 նավարժներին, նոյն իսկ օտա-
 ռահպատակներին, առանց այլ և
 այլութեան պէտք է զինուորա-
 նի:

Ահա այն ապուշ արամաբանու-
 թիւններէն մէկն էլ, որոնցով
 մեր ստրուկ տարրը ուղղւած է մեր
 երիտասարդութեան և ժողովրդի
 մէջ խեղդել ամեն մի ազատա-
 կան ձգտում ու մեր ազատութիւնը
 ձեռք բերելու ամեն մի սահրա-
 ժեշտմանը միասակար ներկա-
 յացնել:

Մեր տեղական քաղաքագէտ-
 ներից մէկը յայտարարել է լսու-
 թիւք որ թէ դէմ է զիննվար-
 ժութեան, ներք մնալուց յետոյ,
 այլ իբր թէ իմբկահարու պէտ-
 քը չը կայ:

ՄԵՐ ԶԻՆԱՎԱՐԺՆԵՐԸ

Անցեալ տարի «Շարժում»-ի
 Վառնայի հայ զինավարժները
 տեսնելու, Բուսուկան թուով հայ
 երիտասարդներ գարձաբերելին
 մարդ նպանելու արտեմտի մէջ
 Ոչ ոք հայերի համար այդ պէտք չէ
 կարելի տեսլ, նրանք վարժու-
 են ինքզինքնին, դազանի, գէթ
 պաշտպանելու, և գաղափար վրէժ-
 լուծելու արեւտի մէջ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՐԻՆԱ

ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ԻՑԳԵՐ ՊՈՒԿԱՐ ԱՊՐՈՒԵԱՆ

ՑԵՂ ԱՓՈԽՈՒԹԵՆԵՆ

Շարժում (Հաստիքի քննի)

Շարժումը յարձի թուրքին, ասոր
 համար պիտի գայ, Ամբողջ այսպէս
 կը տրամաբանէ, և այս եղանակա-
 կը վճռէ քաղաքական հարցերը, և
 ասոր համար ալ ի նպաստ իրեն մեկ-
 նեց «Շարժում»:

Իրինան գիւղական վարժապետի
 մը աղջիկ էր, և բացառապէս իր հօր
 անմիջական խնամքի տակ դաստիա-

Թմրակահարելու ո՞րն է. հայ
 երիտասարդութիւնը ուղղւած է
 զէնք գործածել սովորի, ու սու-
 վորում է. ինչի՞ նրա այդ արա-
 մադրութիւնը քրքրելու կասկա-
 ներով խեղդել:

Չէ հայ երիտասարդներ, սուտ
 է. ձեզ բռնի զինուոր տանող
 չըկայ, ձեր զինավարժութիւնը
 և ոչ ճանկատանի մէջ գտնվող
 հայերի համար վնասակար է.
 Գրանք ստրկական բանաստեղ-
 ժութիւններ են, դուք ձեր գործը
 շարունակեցէք: Ամեն մարդ ի-
 րաւունք ունի զէնքի հետ ծանո-
 թանալ, նրա գործածելը զիտե-
 նալ: Քանի յարմարութիւն ու-
 նէք վարժեցէք, եթէ ոչ հայ-
 րենիքի դատը՝ գոնէ ձեր անձը
 և բնութիւնը զէնքով պաշտպա-
 նելու համար:

ՎԱՐՊՈ

ՉԲԵՂ ԵՐԵԿՈՅԹ ՄԸ

Փետրուար 15-ին շաբաթ գիշեր
 տեղի ունեցաւ Վոյթէն արտհին
 մէջ երկույթ մը, նախագահու-
 թեամբ Տիար Մինոս Չերազի,
 ուր Պ. Մ. Պոլհաննէսեան խօսեցաւ
 հայ երիտասարդութեան և ազ-
 գա ին բաժանմանտիւն վրայ, ու

Պարկեշտ առաքելը մեծ վստա-
 հութիւն պատած էր իր գիւղացիներ-
 լու մէջ. անոնք իբր իրենց մարդը
 կը նկատէին զինքը, և ուղղաբա-
 մտիկ կընէին անոր պարզ ու յստակ
 ճառերը: Իր խօսուածքը միակերպ
 բայց զօրաւոր և ապագայի հուսա-
 քով լի էր. նա միշտ բարիքներ կը
 գուշակէր եւ կըսէր թէ հարստահա-
 րիչներու և բռնաւորներու թագա-
 ւորութիւնը իր վախճանին մօտեցած
 է, պէտք է զինուել, որովհետեւ
 կուրը մտաւոր տ է, և արդէն բոլը-
 կուած է:

Գիւղացիները ոչինչ այնքան չէին
 բաղձար, ի սրտէ, որքան օր առաջ
 իրենց ազատուիլը տեսալ իրենց
 օճախի արեւը խոնոյնելէն, ասոս
 նորդը յափշտակողներէն, զիրենք
 տանջող գապիլիներէն ու աղայնե-
 րէն: Ոչ մի տեղ բռնութիւնը այդ-
 չափ զգալի չէ եղած, որչափ գիւ-
 ղերը. աս է պատճառը որ գիւղացի-
 ները ուրախութեամբ կը զինուե-

յետոյ նախապէս պատրաստուած
 շնորհակալութեան ուղերձ մը
 ստորագրուեցաւ գրեթէ բոլոր
 ունկընդիրներէ Pro Armenia-ի
 խմբագրութեան ուղղութիւնը:

Պ. Յովհաննէսեան, բարձրա-
 հասակ, վտիտ ու արտաբայախոյ
 գէթքով համազուտ ու հաւատա-
 րիմ յեղափոխական մը, բաւա-
 կան ճկուն ոճով պարզեց յեղա-
 փոխութեան նպատակը, գաղա-
 փարային յեղափոխականներու
 անձնուրացութիւնը ու համբաշխ
 գործունէութեան մը գեղեցիկ
 օգտակարութիւնը սրուն օրինակ
 բերաւ Խանասարի և ուրիշ ար-
 շաւանքներ՝ որոնք բաւ կազ-
 մակերպուած էին Իրօշակեան
 Հնչակեան ու Արմենական ան-
 հատներէ. փերջապէս գիտել
 տուաւ թէ հայ հարստաներ լու-
 լորովին ձեռնպահ ու հեռու որ
 և է յեղափոխական մասնակցու-
 թեան անդադար քննադատեցին
 ու բոլոր շարիքները զօրս կրեց
 հայ ազգը յեղափոխութեան ան-
 խուսափելի հետեւանքը համա-
 րեցին: Պ. Յովհաննէսեանի խօս-
 հրդածութիւնները բաւակա՞մ
 յստակ ու իմաստալից էին և ա՞մ
 ուժգնօրէն տիրեց խանդավառ
 ունկընդիրներու մաքրուել վրայ,
 Երեկոյթին մասնաւոր փայլերէն

րէին վարժապետ Գիրօի քարոզու-
 թիւնները:

Գիւղական վարժապետի յարկի
 տակ կը ժողովուէին պուլկար յեղա-
 փոխութեան էն նշանաւոր գէթքերը:
 հոն էր իրենց պատասպարանը ու թա-
 գստոցը, ինչ որ կը մերժէր հայկախել
 Պուլկարիոյ սին ու փաստապան մայ-
 րաքաղաքը իր գաղափարուն: Աս
 փոքրիկ ու ազգատիկ բնակարանին
 մէջ կը կազմուէին ան վիթխարի
 ծրագիրները որ Պուլկարիոյ ապագան
 վճռելու սահմանուած էին: Հոն կը ջ-
 նային ու օրերով կը մնային վոյժ-
 տաները ու առաքելները. այդ խըր-
 ճիթն էր միակ ապագով կայարանը
 որ հիւսիսային ու հարաւային Պուլ-
 կարիոյ յարարութիւնները կը գիւ-
 րացնէր:

Իրինան, այս գաղափարական մար-
 դոց շրջանին մէջ մեծնալով այդ
 ընտրեալ հասարակութեան ազգեցու-
 թեան ներքեւ էր, և իր հօրը մոլի-
 րանք հայրենասիրութեամբ սնուե-

Գիւղական վարժապետ:

մէկն էր նաեւ երգեցիկ երիտա- սարգն ինքն իր հանգար- տարաւ և կանոնաւոր երգեց Մեր Հայրենիք, Բամբ Որոտան, Զէյ- թունցի ենք, ազգային խորհր- դաւոր ու յուզիչ երգերը: Պ. Մ- նաս Չերազ Թրանսերէն ուղերձը կարգաւէ առաջ, ուղեց շեշտել ու բացատրել պահպանողական- ներու հոգեբանական վիճակը, պատմեց թէ «նէնիչէրիններու ատեն ամէն հայ կամ ու է քրիս- տոնեան պարտաւորեալ էր գրողանը քուրջ մը պահել, որպէս զի յանկարծ անոնցմէ մէկը ոտքերը մաքրել ուղած պարտաւորեալ պատ- րաստ գանուէր, եթէ ոչ սաստիկ ձեռք մը կը լլար քրիստոնէին պա- տիժը»: Աւ իրաւամբ կրտսէր թէ «այս դարումը ու ահաբեկիչ ստրուկութեան մէջ տառապող ժողովուրդը, որքա՞ն ղ ժողովու- թեամբ ու ժամանակի տեւողու- թեան մէջ ընդունակ կրնար ըլ- լալ ազատագրութեան փրկարար գաղափարին»: Աւ հակայեղափո- խականներու ընթացքը նման- ցուց յիշելով Խասգիւղաբնակ մեծ ազայի մը խորին ատելու- թիւնը ջրհանկիրներու պէմ և սակայն որ մըն ալ յանկարծ ը- սաւ, իր տանը կից հրդեհ մը ծագելով այդ մեծ ազան սարգա- փահար ատած ջրհանկիրներու ոտքը կիլնայ որպէս զի տունը ազատեն: Աւ վերջին բանաձե- ւով մը, ըսաւ թէ, մեր ազատա- գրութիւնը մենք պիտի պատ- րաստենք, աւելի քան երբեք ինքնօգնութեամբ, մեր գործը մենք պիտի տեսնենք, փոխա- նակ կարմիր խարաղաններով իրար հարուածելու, պէտք է կարմիր հրացաններով թշնա- միին դէմ ելնենք, այս է միակ միջոցը մեր փրկութեան իրա- կանացման:

Ասոնք ամէնը աղէկ, և սա- կայն միթէ շատ պահանջկոտ պիտի ըլլայի եթէ ըսէի թէ,

Պ. Մինաս Չերազը, կուզէի աւե- լի խիղախ, վեհանձն ու ճար- տասան տեսնել իր ունեցած փոր- ձառութեամբը ու մտային պա- շարովը:

Երկու խօսք ալ եւս ու վերջա- ցնեմ: Մենք պահպանողական կուսակցութիւն չունինք, մեր հարուստները «պալանտի մէջ լոսաւորեալներու դասակարգ մը կը կազմեն: Սրտանց անկեղծ յե- ղափոխականի մը պէս ազգին բա- րիքներուն ըզձացող են, ստուար մեծամասնութեամբ հակամէտ են քաղաքական վերածնութեան գա- ղափարին, բայց չեզոք կը մնան. վասն զի, վերջին յուսախարու- թիւնները զիրենք ու ինչպէս ընդհանուր ազգը տակն ու վրայ ըրաւ ու խելայեղօքէն շնչեց, և ցարգ ատոր հետեւանքն է իրենց վախկոտ ու կասկածոտ վերաբե- րումը դէպի ազգային յեղափո- խութիւն: Բայց այս ընթացքը եթէ երկարի ոճրագործ անտար- բերութեան կը հասնի:

Այլ եւս ամէն հայ ազատ չէ պարզապէս հանդիսատես մը մնալ յեղափոխական շարժումին, քա- նի որ յեղափոխութիւնն օրուան ճշմարիտ ու ծանր խնդիրն է, քանի որ տիեզերք միակ միջոցը կը նկատէ զայն ճնշուած ազգե- րու վերածնութեան, մասնաւոր- մեզի համար որ 90ի Գումրա- քուի յեղափոխութիւնը արդէն վերջակէտ մը դրաւ թրքահա- յոց պատմութեան անցեալին առ- ջեւ: Արդ՝ առաւել քան երբեք պէտք է մտքերնիս վերանորո- զենք, ու կարծենք թէ ալ վրձ- նական առեւն է որ ամէն հայ գործնական միջոցներով իր ազ- գային պարտականութիւնները կատարելու պատրաստուի: Բա- րիդի հայ գաղութը որ սրանչելի «միլիէտ արգիլութիւն» մըն է յե- ղափոխութեան, պէտք է հոգ տարուի ու պարբերաբար սար- քուին յարաթ գիշերուան պէս

սրբուն երեկոյթներ որոնք գրա- կան օգուսներ տալով հանգերձ, ժողովրդին սրտին մէջ պիտի արթնցնեն իրենց անբռնաբա- րելի իրաւունքը արեւնկազ բռնակալութեան դէմ և որով իւրաքանչիւր անհատ պիտի գիտնայ իր վրայ ծանրացած պարտականութիւնը կատարել ինչպատ ազգութեան անժխտելի շահերուն:

Ե. ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ
Բարիզ, 15 փետրուար

ԳԵՂՈՒՆԻՆ

«Նքեզին և ճաշակաւորին հա- յելին «գեղարուեստը» մեր մա- մուլին մէջ բառին ընդարձակ և ճիշդ նշանակութեամբ՝ երբեք գոյութիւն ունեցած չէ: Ճիշդ է մենք ունեցած ենք մի քանի գեղանկարներով և ճաշակաւոր պատկերներով զարգարուն հրա- տարակութիւններ, բայց ա- տոնք միայն գեղարուեստի մի մասը՝ այսինքն նկարչականը ներկայացուցած են, ինչպէս վա- ղամեռիկ «Արաքսը» Չունեցանք մի գեղեցիկ թերթ, ուր ընթեր- ցողը գանէր գեղարուեստի ամէն մասերն՝ երաժշտութիւնը, նկար- չութիւնը, արձանագործութիւնը, փորագրութիւնը և ճարտարապե- տութիւնը: Այդպիսի մի հրա- տարակութիւն, եթէ արժանա- վայել կերպով լոյս տեսնէ, այն՝ հայուն հոգին կսքանչացնէ, լսե- լու ճաշակը կը փափկացնէ, պատ- կերին վսեմը, գեղեցիկը կը ներշնչէ:

Մեր «Որբունի» հրատարակու- թիւնը ընդունուեցաւ իբրեւ գեղարուեստական կատարեալ գործ մը, մինչդեռ նա միայն խնամատիպ հրատարակութիւն մըն էր: Երկուստեքն իր իբրեւ գեղարուեստական (և ոչ

թէ գրական) հրատարակութիւն մը լոյս կը տեսնէ, մենք կը ձկան- խենք ըսելու որ սա տակաւին պակասաւոր է. այն ատեն մենք ամէն ջանք պիտի թափենք կա- տարեալ գեղարուեստական մի գործ ստեղծել մեր ազգատիկ մամուլի մէջ, երբ ապահով ըլլանք՝ որ մեր հրատարակած պրակն կարող պիտի ըլլայ իր ծախքն գոցելու: Ինչպէս ոմանք ըսին, անտարակոյս մենք Երուսաղիմի մէջ գեղեցիկին ու ճաշակաւորին մէջ ապրելով, աւելի ձեռնհաս ենք և աւելի գիւրութեամբ կարող ենք սատարելու հայ մամուլի գե- ղարուեստական մասնաճիւղին քան թէ միւս ազգային մամուլ- ները՝ որ կը գտնուին յիւրեւեւ: Ուրեմն առի փոքր, առ այժմ իբ- րեւ Նովի մեր «Բաղմալէպոյի բաժանորդաց», մերթընդ մերթ կը սկսինք հրատարակել այս գործը, այն ամէնը որոնք բա- ժանորդ չեն մեր «Բաղմալէպոյին և կը փափային ունենալ այս թերթը, յղելու են 2.50 ֆրանք»:

Ահա այս յառաջաբանով է որ «Բաղմալէպոյի յարգելի խմբա- գրութիւնը լոյս է հանել, «Գե- ղունի» իսկապէս գեղեցիկ հան- դէսը: Առ այժմ միայն այսքանը կասենք որ ամէն մի ճաշակ ու- նեցող հայ, պարտաւոր է այս հանդէսը ունենալ. իսկ «Շար- ժում»-ի յետագայ համարները մէկուս, մանրամասնօրէն կը խօ- սենք «Գեղունի»-ի մասին:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Որոտասահմանի այն բաժա- նորդները որոնք կուզեն «Շար- ժում»ը շարժել երկու անգամ զատ զատ ստանալ պէտք է երեք ֆրանք բաժնեգրինէն աւելի վճա- րեն, այսինքն 15ի փոխարէն 18 ֆրանք:

լով սորուեցաւ անհուն սիրով փարթի իր դժբախտ Հայրենիքին: Իր սիրտը Ազատութեան ու Արդարութեան ձայ- նէն կը տրոփէր. բնութիւնը իրեն շնորհած էր փափուկ ու զգայուն սիրտ մը, եռանդուն ոգի մը, եւ իբր պար- գեւ՝ գեղեցկութիւն:

1876 Փետրուարին, վարժապետը իր աղջիկը քաղաք զրկեց որ անոր միջոցաւ կարողանայ թրնօվայի գոր- ծիչներու հետ յարաբերութիւն ունե- նալ. Իրինան խզճի մտօք ու կանո- նաւորապէս կը կատարէր հօրմէն ստացած հրահանգները եւ թրնօվայի գլխաւոր գործիչներուն կը տեղե- կադէր ան յանձնարարութիւնները որոնք գործին կը պատկանէին: Նա իր հօրաբորջը մօտ կապրէր, մի հա- մեստ արհեստաւորի տուն, ուր ոչ ոք կրնար կասկածել Իրինայի վասն- յալի գործունէութեանը մասին:

Կօրնեա-Օրբնօվայի գէպը քաղ- քին մէջ մեծ իրարանցում ու յուզում յառաջ բերաւ, ու օրիորդի գրու-

թիւնը տան մէջ անտանելի ըրաւ: Թրնօվայիցիները միայն ան ատեն հասկցան թէ «Կուզա՞նք» կը նշա- նակէ եղբր պատամարտներուն ձեռքերը կապուած դալը եւ իրենց յոյսերուն ջախջախում ըլլալը:

Իրինայի ազգականները միեւնոյն գիշերը դէպքէն յետոյ, համախորհե- լով իր հօրաբորջ տունը, սկսան ծաղ- րել ու հեզնել յեղափոխականները, որոնք ուզեր են թագաւորութիւն տանել. կեղծաբար կը մեղքնային եւ անոնց ամենաստուկալի ու սարսափելի պատիժներ կը նախատեսէին:

— Սըրկաներ, իրենց մօրը ման «ծը ծախողներ»! բարձրագոյ կը գոռար, քաղաքի էն նշանաւոր ջոշերէն մին, չօրպաճի Սթանէն. ընթրիքի նստե- լու ժամանակը, ձեռքովս գլխովար պիտի կախեմ ատ կատղածները:

— Ելան երկիրը խառնակեցին, ը- սաւ տանտէրը իր չօրպաճիական գա- ղափարը հաստատելու համար, կախ- ուելու չուան կը փնտռեն:

— Անոնք ատ կուզեն, անդիէն յարեց եղբայրը, բարեխնամ կառա- վարութիւնը ի՞նչ պիտի կորսնցունէ զանոնք կախելով: Ամէնքն ալ մերկ, անվարտիկ, թափառաշրթիկներ ու հանած-վարածներ, անկիւն մը չու- նին, վաղը ի՞նչ երեսով պէյերուն պիտի նայինք, մեզի պէս վաճառա- կաններուն երեսին քօթիթա: կեա- վուր պիտի պոռան:

Այս դատողութիւններու հետ գրա- ջննութենէ դուրս լուտանքներ, հայ- հոյանքներ կը թափէին իրենց ճօրը մանած ծախողներուն գլխին:

Իրինան գլուխը կախած, յուս- մակ կընէր, եւ ինքզինքը չը մատ- նելու համար հաղիւ կը զսպէր ինք- զինքը, իրենց յալիչ խօսքերը զըն- դակի պէս կը ծակէին իր սիրտը. նա Գարալէլովի գրութիւններէն կը ճանչնար չօրպաճիներու ոգին, եւ զանոնք ատելու սովորած էր: Վեր- ջապէս արձամարհական ժպիտ մը նե- տելով, ոտքի ելաւ երթալու: Սա-

կայն ոչ հիւրերը եւ ոչ ալ տնեցի- ները հասկցան ժպիտը, եւ իրենց գլուխը շարժելով վարժուհիին կը- սէին—տեսար, ինչպէր ըրին ձեռ վարժապետները, բայց ձեռ ինչ հոգն է, ինչ կուզեն այս մուրացկանները, ինչ չարիք տեսած ենք թուրքերէն որ զհրար ատենք. միթէ առաջ գէշ կապրէինք իր գործին եղողին մէկն ալ չը դպիր, մեղք չէ մեր հարստու- թեան, հանգստութեան եւ մեր զաւկներուն:

Թագաւորութիւն պիտի առնէին խայտառակները, սրիկաները. ահա, այսպէս կառնուի թագաւորութիւնը: Աստուած գիտէ իր գործը. նա ժա- մանակին ամէն բան կարգադրած է, ծառան ու սէրը զատած է: Մենք թագաւորին բայաներն ենք, պէտք է հնազանդինք անոր: Սուրբ հլու գլուխը չի կտրեր կըսեն, այնպէս չէ—դուն վարժուհի եւ, գիր կը կար- դաս:

Չօրպաճի շարունակեց:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԱՃԿԱԶԱՅ

Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ը

Վաճառականը կուգայ կը բազմի քաղաքները (Սօխում Սօչի Ալտեր եւայլն) եւ երկրագործներուն լուր կուտայ որ ապրանքները բերեն, Միախոսները եկածին պէս կը տեղադրուին վաճառականներու յատուկ պահեստներու մէջ, որպէս զի անձրեւի տակ եւն. չի փչանան, Կըշտելու ժամանակ հնաւանդ սովորութիւն է 5—10 փութ գողանալ. պաշտօնիէն յետոյ կուգի բացարձակ կսփռուածութիւնը, վաճառականը կսկսի հազարումէկ զիտուցութիւններ գիւղացիները գող կամ խարդախ կը բռնէ եւ այդ հիման վրայ կտաջարկէ փութիւն երկու երեք բուլլի կտորիւ. լաց ու պաղատանք օգուտ չընեն. ապրանքը վաճառականի պահեստն է, գիւղացին իրաւունք չունի ետ առնելու եւ առնէ ալ ի՞նչ կընէ. գիւղ տանիւ անկարելի է. դուրսը ձգել անյարմար է եթէ երբէք կարողացաւ պահեստէն հանել հակերը որո՞ւ ծախէ, իրար հակառակ վաճառականները անգամ համաձայնած են այդպիսի պարագաներու մէջ իրար հետ չի մրցիլ: Երկրագործը զուր սեղը շարժաններով թափառելէ յետոյ կստիպուի գլուխ ձեռք, ի հարկէ փութ զուլի կտորիով 1—2 բուլլի կամ կշիռ ընդհանուր գումարէն զեղջելով 5—25 բութ: Այս խաղերը ամէն տարի կը կրկնուին, 1898 թիւին Սօխումի մէջ Սարգիս Փիլոսոֆի անունը հայ մը անձնասպան եղաւ վաճառականներու լարած ջանքերէն ոչ մի ելք գտնելով: Միախոս գողները այնքան անպիտան կը վարուին, որ իշային համբերութիւն ունեցող գիւղացիները անգամ կը կատաղին եւ ձեռով վրէժնին կանանքն: Ոմանք ալ սկսած են ինքնապաշտպանութեան համար խարդախ միջոցներու գիւմը եւ ահա վաճառականները միշտ մեղադրողի դերին մէջ կը տեսնենք: 1896 թիւին Սօխումի մի քանի գիւղեր խօսք մէկ ըրին որ ծխախոտները քաղաք չի իջեցնեն, այլ վաճառականը դայ ինք առնէ եւ որ հակին որ չի հաւնիր

թող եւ ձգէ, նախնական ինքնապաշտպանութեան իւրօք ձեւ մըն էր, բայց վաճառականները յաջողեցան նիւթապէս նեղիլ եւ յետոյ խանգարել այդ միութիւնը: Միախոս գողը գլխաւոր առեւերն են Աւստրիական Պոկտանով, Մէլ, Երասուտի, Ասլանիաի եւայլն:

Երկրագործը հազիւ մի քանի բուլլի ունենալով կը վճարէ խանութպանին եւ դարձեալ կը մնայ պարտապան: Կիններով տղաներով ջարդ ու փշուր կը լլան, կարուածաէրերու հողերը պարգացնելու եւ մի քանի վաճառականներ ու վաճառողներ հարստացնելու համար տխուր ճակատագիր հայ ժողովրդին, ամէն տեղ ինք աշխատող, արիւն ու քրտինք թափող եւ ամէն տեղ օտարները հարստացնող, արեւնակից տղրուկներէն թաղանոց եւ ամեն տեղ ինք անօթի ու անապահով:

Չատառակայի եւ թէլիսի ժամանակներն են որ Տաճկաստանի վախառուներն ալ կուգան իրենց հունձքը քաղելու. մեծ մասամբ Օրտուցիներ են, որոնց մէջ նշանաւոր են Տ. Սրբաճամ քահանայ առաջն. փոխանորդ, Գասպար աղա եւ իր որդին Գառնիկ Սերճանեան, Տօթթ. Յարութիւն Անմահան, Յակոբ Փոլաճեան եւն. ասոնք յաւիտենական տղրուկներ են, չգոհանալով հայրենիքի մէջ շորթածներէն, մինչեւ Ռուսաստան ալ կը հետեւին իրենց զոհերուն. բայց 96—97 թիւին այնպիսի փառաւոր դաս մը կը կտրուի քանի մը երիտասարդներէ, որ ալ չեն համարձակուիր ոտք դնել Սօխում: Գասպար աղայի 3000 բուլլի արժողութեամբ մուրհակները ասին եւ կտոր կտոր ըրին, միւս լճիներէն ալ ձեռ ու անարգանքներ ուտելով թողուցին փախան երկիր:

Սօխումի չըջանի մէջ դրամի տուկոսը ընդհանրապէս սարեկան 100/ին 30էն աւելի չէ, իսկ մինչեւ 0/0ին 240 տուկոս վճարուելուն ես ակնատես եղած եմ: Կտոր գիւղի նորահաստա պաղթականներէն, կարուածահարկ պիտի վճարէին 400 բուլլի ապրանքներն պատրաստ էր, բայց ձախած չի իննելով փող չունէին, կարուածատէրը զիջում չըրաւ եւ հարկադրուեցան փոխառութեան գիւմելու:

Ակնցի խանութպան Պետրոս աղա անունը մէկը միայն բարեհաճեցաւ

400 բուլլի փոխ առլ ամսական 80 բուլլի (տուկոսով, սարեկան 0/0ի 240 բուլլի կընէ), Երկու ամիս վերջը երբ գիւղացիները պիտի վճարէին, պատահամբ Սօխում գտնուեցայ եւ իմացայ այդ դէպքը. գիւղացիները համոզեցինք գոնէ 0/0ին 20էն աւելի չի վճարել, խոստանալով օրէնքի պաշտպանութեան, բայց չի համաձայնեցան, արտուր շեշտով մը յայտարարելով թէ ամենք ալ համոզուած ենք որ կը կողոպտուինք, միայն չենք ուզեր մեր անունը վատ հանել, մենք աղքատ մարդիկ ենք, միշտ փոխառութեան կարիք կուենանք, եթէ հիմա Պետրոս աղայի հետ այդպէս վարուինք, ալ ոչ մի փողատէր փոխ չի սար մեղ, այն ասան որո՞ւն պիտի գիմենք մենք եւ ո՞վ պիտի օգնէ. ու անձայն անչափ 160 բուլլա տուին 2 ամսուան տուկոս, եւ իսկապէս ինչ ընեն գիւղացիները. չկան պէտքական փոխառու պանքաներ, հողատէրէր չեն որ վարկ ունենան, ոտու չեն որ կտառվարութիւնը պաշտպանէ. կովկասեան գիւղատեսուական ընկերութիւնն ալ գրեթէ անուաւնապէս գոյութիւն ունի եւ միջոցներ չունի այդպիսի մութ խորշերու շարքութիւն նու իրելու:

Չը նայած անողջապահական անպատա պայմաններու գիւղերու մէջ ամուր գողացուցիչ է. 100 մահի դէմ 140—150 ծնունդ կայ. զժառնգարք վիճակագրական կանոնաւոր թիւեր չի կրցայ ձեռք ունցնել. քահանաներու մօտ չի գտայ իրար հետեւ մի քանի տարեայ վիճակագրական մատեաններ, իբր թէ կոնսիստորիա զրկած են եղեր: Ամուսնութիւնները ասիական ձեւով կը կատարուին, երիտասարդն ու աղջիկը ծնողներու կամքով կամուսնանան: Գաղթական գիւղերու մէջ երկու սեւնէն ալ ամուրիներ հազուադէպ են. աղջիկները 13էն եւ մահչբը 16 տարեկանէն կամուսնացնեն, ամուսնութիւնը աւելի սնանասագիտական նկատմամբ կը կատարուի. երկրապարտները մեծ պահանջ ունին այսխատող ձեռքերու, ուստի աղաքներն շուտ կը կարգեն որ օգնական մըն ալ աւելանայ: Ծանիկցիներու եւ օրտուցիներու մէջ սովորութիւն կայ գլխաղին վճարել, որ մինչեւ 100 բուլլ կը բարձրանայ, եթէ աղջիկը գեղեցիկի ու աշխատասէրի հոշակ ունենայ կամ փեսան փողատէր ու ձերա-

ցած լինի. նշանախօսութիւնն կովմը կամ էջ մը ծախելէն սարբերութիւն չունի: Տրապիզոնցի գիւղացիներու մէջ գլխաղին սովորութիւնը չկայ, բայց երբ ճանիկցիներու աղջիկ պիտի առն, խորամանկութեամբ առանց գլխաղին չեն համաձայնիր: Ստան ամուսնութիւններ քիչ են. զանազան տեղացիներ իրար վրայ պակասութիւններ գտնելով իրար չեն հաւնիր. սակայն իսկապէս իրարմէ այնքան որոշ սարբերութիւններ չունին:

Գիւղերու մէջ բոնի առեւանդումներ շատ կը կատարուին. քահանաները միշտ պատրաստ են օրհնելու այդ վայրերի արարքները, այդ պարագաներուն պսակի արարողութիւնը 100 բուլլիէն պակաս ձեռք չի տար, իսկ ընդհանրապէս պակասագրամը 15—30 բուլլի է որ սարսափելի տուրք է կարգ մը քահանաներ ու գիւղ. թաղականներ առեւանդումը իրենք կը թելադրեն երիտասարդներու. որպէս զի յետոյ կայտոք ուտելու աղբիւր բացուի «մեղօք է» պատճառաբանելով. այդպիսի վարպայետութիւններով հոշակուած է արդէն յիշուած նիկողոս քահանան որ այժմ 10—15000 բուլլի կարողութիւն ունի, Մի վերին աստիճանի անբարոյական ու լիրս սովորութիւն սեսայ Մժարայ գիւղի մէջ. երբ գիւղին աղբեցիկներէն մէկը կուգէ բարեկամներէ մէկուն համար մի աղջիկ եւ մերժում կատանայ, այն ժամանակ կսկսի հրեշար փնտոյլ ու սղջիկը թակարդի մէջ ձգելով երիտասարդին բոնաբարի կուտայ, որով ծնուցիկը կստիպուին ակամայ հնազանդիլ: Ընդհանրապէս ճանիկցիներու մի բնութիւն մէջ բարքերը շատ ապականուած են եւ վնասական տիտերը Տաճկաստանէն բերած են հետեւին:

Իրար մէջ գողութիւններ, դրամի համար սպանութիւններ յաճախ կը պատահին ճանիկցիներու մօտ. օրտուցիներու եւ արապիզոնցիներու մօտ հազուադէպ են այդպիսի դէպքեր:

ՆՈՒԱԳ

Թէոսոսիա

— Ատ գրքերը, ընթերցարանները դպրոց, ընկերութիւն, չեմ գիտեր որ ինչ ինչեր, մէճլիսի մէջ քօնաքը, փաշայի ուշադրութիւնը հրաւիրած եմ. չիտակը խօսելով, դեռ առաջուրէն աս բաները ինձ դուր չեկան, խելագար գլուխներ, եւ վախին կը խնդար երբ որ իրեն ասոնք կը պատմէի:

— Թող տուր, խնդրերը ցտուկուտեն, խաղան յոգնին, անոնք ճանիլ են, կըսէր փաշան:

Աստուած անոր կեանք տայ շատ խելացի մարդ էր վախն. նա որսալու եւ ճանկելու կերպը գիտէր, նա կսպասէր որ մեր աւանակները թակարթի մէջ ինչային եւ ձեռքը գնելուն պէս, յանկարծ ամէնքն ալ խելոյէ:

— Ես ալ անկէ վար չեմ մնար, գոռոզութեամբ աւելցւց չօրպածի Սթանէն, չիբելով իր ունեցած փողը, որ կը պարուենակէր իր բուրս խելքը եւ արժանիքը: Գաղտուկ կը հսկեմ,

կը գիտեմ, արտաքուստ կը կեղծեմ թէ րանէ մը լուր չունիմ: Անցիւյ օր դրամ ուղեցին ինչ, կը հարցունեմ ինչո՞ւ:

— Չէ՞ք գիտեր, Ազգային Սուրբ գործին համար, ինձի, չօրպածի Սթանէն պիտի սորվեցնեն:

— Հա՞, այդպէս է. բան մը կը պատրաստուի՞, ես չեմ լսած, միթէ ինձմէ կը պահէ՞ք. այս այդ սպուշնեծերու համար հողիս կուտամ:

— Հողիդ քելի մնայ, դա ոչ ոքին պէտք չի, միայն քակղ քակէ:

— Ե՛ս, գործին համար չսպիկս ալ կը ծախեմ, ըսի:

— «Իրտեմ» որ դուն աղբին գործին նուիրուած մարդ ես, ուրիշ չօրպածիներու պէս չես ընել, կը խնդրենք որ սաս, իսկ ե՞րբ, ի՞նչ պիտի ըլլայ աս ուրիշ խնդիր. հիմակ քեզ տեսնանք, որովհետեւ առանց դրամի բան չի դաւնար»:

— Իրտեմ, ինձի ասանկ խօսքեր! անգթութեամբ կը շարունակէր չօր-

պածի ասնտէրը, ասոր անոր կը խարեն, կը կողոպտեն ստակը կառնեն եւ սրիկաները զիրենք կարգարօցնեն յանուն Սուրբ գործին ըլլալուն համար: Գիտե՛ս, ինձի զիմօղը ո՞վ էր, աս խայտառակը որ քօնաքը պաշտօնէս է, թագաւորին հացը կուտէ, եւ թագաւորին կը գաւաճանէ. նոյն վայրկեանին իմաց պիտի տայի բայց յետոյ մտածեցի, որ այդ սպուշնեծին մի քանիսն ալ ձեռքիս տակ առնեմ, եւ ան ատեն... մէկէն ի մէկ լաւ չէ, որովհետեւ ո՞ւրկէ ըլլալը չուտ պիտի կուսեն, թող զիս ազգին նուիրուած մարդ համարեն, վաղը չես գիտեր քամին ուրկից կը փչէ:

— Չըլլայ թէ անոնք քեզ ձեռք գնեն, անդիէն յարեց իրինայի մօրաքոյրը. գիտես, աս ձեռքը, քանի՞ հողի գիւղը նանտրայի սփերը գտնուեցան, եւ քանիսին ոսկորները ջարդեցին, ինչպէս մեր դրացիները, որ մինչեւ հիմա չը կրցու իր ոսկորները տեղը բերել:

— Ինձի, ձեր դրացիի նման ձեռք դպել չեմ տար, հետուէն, կամացուկ միայն կը գիտեմ...

— Մի ըսեր այնպէս Սթանէ, մեղք է, քրիստոնեայ ենք, մեղք պէս անոնք ալ հողի ունին, բաւ իր կիւնը:

— Դու լա՛, կնկան իւնքի պէտք չունիմ, դու տղաքներուն ու ժամը նայէ, ես ատ սրիկան ալ կը կախեմ, եթէ ինձի չը հնազանդի, բաւ չօրպածին ցոյց տալով փոքրիկը որ իր մօրը փաթաթուած էր:

Չօրպածի Սթանի սպանուելքները շատ երկար մինչեւ կէս գիշեր տեւեց, նա կը գոռար...

— Ի՛նչուր նետել պիտի տամ, թող հոն փտտին...

Թարգմ. Պ. Ս.

(Շարունակելի)

Ներկայիս կուգամ իմ խորին շնորհակալութիւնս յայտնել Տ. ք. թ. Մկրտիչ Վարդանեանի, որ ամէն շունք ու խնամք վասնելով յաշնոյեցաւ ամենավտանգուոր վիճակէ մը ազատել կողակիցս իր ծննդաբերութեան միջոցին:

ԱՐՏԱՇԷՍ ԹԱՇՃԵԱՆ
Վասնա, 3 Մարտ 1901

Սուսալ և փորձառու հիւանդապահուհի մը իր արհեստին վերաբերեալ զբաղմունք կը փնտռէ:

Պէտք ունեցողները թող խրմբագրութեանս գիմեն:

1-5

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՔԻԱ ԵՒ ԵՄԷՆ

Սուլթան Համիտ կաշիէն դուրս կելլէ ինքզինքը ամբողջ աշխարհի փառանքեան խալիֆը ճանչցնելու համար, և այդ անոր փառասիրութեան էն թող ու հիւանդ կողմէ: Սուլթանի բաղդէն ուրիշներ ալ կան որ կուզեն համախառնութեան խալիֆի տիտղոսը ստանալ ու արդէն Եմէնի արաբ մը ինքզինք խալիֆ հռչակեր է:

Ահա թէ «Թայմզ» ինչ կը գրէ այդ արաբ խալիֆին առթիւ. «Հիւսէինի և Քորոշի Մուհամմէտի ընտանիքէն Էսէտ Համիտ Էտին որ յունկարէն սուլթանի զէմ ազատամարտ էր ինքզինքը խալիֆ հռչակեր է: Էմիր Իբնի արշաւանքը գէպի փոփոխ սա շարժման նպատակով էն: Իպն Բաշիտ Նէճրիի հովիտի մէկ մասէն անցնելով, իրեն համակողմներ հաւաքելով քաջուեր է Եմէնի լեռները գործին վերջաւորութեանը սպասելու:

Չորս ամիս առաջ Մէլիէ անունով հետաքրքրական գիրք մը տարածուեցաւ արաբ իւլէմանե-ըլլի և ցեղապետներու մէջ. գիրքը արաբները կը գրգէ Օսմանեան լուծը թօթափելու:

Պայտայ մէջ տուններուն պատերուն վրայ երիտասարդ թուրքերը յեղափոխական ոգով յայտարարութիւններ փակցուցեր են Սուլթանին սպառնալիքներ կը կարդան: Մակեդոնիոյ մէջ ձերբակալութիւնները կը շարունակուին: Սուլթան Համիտ շնորհակալութիւն յայտներ է Ռուսիոյ մակեդոնացիները և պուլկարները սանձելուն համար: Հայաստան է միայն որ դեռ անձայն է, Սուլթան անկէ ալ կը կասկածի:

Ինչ ընէ խեղճ Սուլթանը. շարունակ Եմէնի, Մակեդոնիոյ, Հայաստանի խռովութիւններ... Եւրոպա կրէտէն էր որ շարունակ անհանգիստ կընէր. ան ազատեցաւ, հիմա ասոնք մնացեր են, ու միշտ Սուլթանի հոգին կը յուզեն: Գուցէ շատ անգամ մըտքէն անցունէ որ երանի սա մնացածներն ալ ազատին և ինք քիչ մը հանգստանայ: Բայց անկէ վերջն ալ երիտասարդ թուրքերը պիտի կատաղին: Չէ Սուլթան Համիտին հանգիստ ըլլալ վիճակուած չէ: Ան մինչեւ վերջին շունչ հոգիի ստակալի փոթորիկներ պիտի ունենայ, պիտի տանջուի, ինչպէս ինք հազարաւորները, միլիոնաւորները կը տանջէ:

ՖԻՆԼԱՆՏԻ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Հելսինքֆորսի մէջ հակառուսական մեծ ցոյց մը տեղի ունեցեր է Ռուսական վերջին, Ֆինլանդիոյ ազատութիւնը կապտող հրովարտակի տարեգարձի առթիւ:

Երեկոյեան ժամը 5-ին Ելեքտորական հաղորդիչ լարի վրայ էսըլանտ փողոցը, սեւ պատտա մը կախեր են, որուն վրայ գըրուած է եղբեր յօգուտ հրովարտակի հրատարակութեան ձայն տուող ձերբակոյտի անդամներուն անունները: Խանութի մը լուսամուտներուն վրայ գրուած է եղբր «օրէնքը ամեն բանէ վեր է»: «Երկիրը պէտք է օրէնքով կառավարուի»: Երեկոյեան ժամը 8-ին բոլոր փողոցներուն վրայ գտնուած տուններու պատուհանները գոցուեր են խանութները նոյնպէս և ճրագները մարեր են: Ճրագներու մարելը տեղի ունեցեր է քանի մը օր առաջ սարածուած յայտարարութիւններու համաձայն: Ժամը 7 1/2-ին զարգացած երիտասարդներէ կազմուած մեծ խումբ մը հաւաքուեր է:

Ալէքսանտր Ա. ի արձանի քով, իսկ խումբ մը կիներ սուգի ժպտաւէն մը դրեր են, մակագրութեամբ. ժպտաւէնը շուտով վերցուէր է: Աւրիշ մեծ խումբ մը պտըտեր է փողոցները և զօրով խանութներու ճրագները մարեցնել է տուեր: Ամբոխը «կատուի համերգ» է կազմեր ձերբակոյտի քանի մը անգամներու տուններու առջեւ: Մերակոյտի անդամները սպառնական նամակներ ստացեր են, «Գաղտնի հայրենասիրական միութիւն» ստորագրութեամբ:

Այս տեղեկութիւնները հաղորդողը, «Ֆինլանդական կազմութեան» է: Չեք բախկանութիւններու

կամ ձեռք առած խստութիւններու մասին ոչ մէկ տեղեկութիւն կայ: Անչուշտ Չարի կառավարութիւնը ձիւնլանտական այդ ապտակը մարսելու չէ:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՊԱՐՍՎԱՍՏԱՆ

Այս երկու պետութեան մէջ համաձայնութիւն մը գոյացեր է, որուն համեմատ, Ռուսիոյ պետական պանթան մասնաճիւղեր պիտի հաստատէ Պարսկաստանի գլխաւոր քաղաքներուն մէջ:

ՉԻՉՍԱՏԱՆ

Մարդ 11-ին «Թայմզ» Շանկայէն կը հաղորդեն ստոյգ աղբիւրներէ որ Ռուսիա Չինաստանի յայտարարած է թէ՛ Եթէ Մանչուրիոյ վերաբերեալ զաշնագրութիւնը Էինաստանը մօտ արբեր չի ստորագրէ. այն ժամանակ ես պիտի քաջէ և անոր փոխարէն աւելի ծանր պայմաններ պիտի առաջարկէ:

— Լիհունկ Չանկը ինքզինքը դիմագրելու անգոր կը յայտարարէ, ան խնդրած է Անգլիոյ, Գերմանիոյ, Մ. Եւրոպայի և Ճարմանի միջամտութիւնը:

Ի Տ Ա Լ Ի Ա

Փետրուար 25-ին իտալացի Նշանաւոր յեղափոխական քարոզիչ Մաձձինիի մահուան տարեգարձն էր: Բազմաթիւ պատգամաւորութիւններ, Իտալիոյ ամէն կնիքներէն պակներ պիտի զնէին Գարիպալտի ընկեր մեծ հպարեանքին կիսարձանին վրայ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Օրանժի հարաւ արեւելեան կողմը բռնուած են քաղի մը մասնը պօէր շոկասներով որովհետեւ Անգլիական պահակազօրքերը հեռացած են քաղաքներէն:

— Նոր տեղեկութիւններու համաձայն Տուէթ կանոնադրապէս օրական 25 միլոն առաջ կանցնի դէպի հիւսիս:

— Բանակցութիւններու մասին դեռ տեղեկութիւն չէ ստացուած. բայց հաւանական է որ կարճ ժամանակի մը մէջ, մօտ օրերս որոշում մը ըլլայ: Յայտնի չէ թէ Պոթա միայն իրեն համար կը բանակցի թէ նոյնպէս և իր բանակին համար, որոնց թիւը 5-8000 է: Պօէր շրջանակներու մէջ կը պնդեն թէ Շալիկ պուլկեր, Եթայն, Տուէթ և Պոթա չեն կրնար բանակցութեանց մէջ մտնել մինչեւ որ երկու հասա-

րակապետութիւններուն անպայման անկախութիւնը չընդունուի: — Ամբողջ աշխարհի պօէրասէր կօմիտէներու պատուիրակները հաւաքուած են Բարիզ ընդհանուր գործունէութեան մը համար ծրագիր կազմելու:

ԿԱՐՅԻՈՐ ԱՉԻ

Սուրբ Փրկչի Ազգային Հիւանդանոցի Պատուարժան Հոգաբարձութիւնը Պուլկարիոյ մէջ սպասելու համար, ինչպատ այդ բազմակարող հաստատութեան հրապարակ հանուած և մասնաւոր խնամքով պատրաստուած առաջին տեսակ սիկարիթ թղթի թէն հոս զրկած ըլլալով, կը խնդրուի յարգոյ հասարակութենէն որ նախապատուութիւն ստայ այս թղթի, թէ անոր ընծայած անաւելութիւններուն համար եւ թէ նպատած ըլլալու համար հարիւրաւոր խեղճերու հոգատներութեան դժուարին եւ բազմապահանջ դիրքին:

Գիմել Տիար Պիպերեանի վաճառատունը, միակ կեդրոնատեղի Պուլկարիոյ համար: Տիւպէք-Չէյթէ:

8-10

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

Sof. V. Sussnehlundցի եւ Ե. թոփչեանցի «Die sozial ökonomisch Türcei» Հաւարական աշխատութիւնը Հայկական հարցի մասին: Գիմել 2 մարդ ճանապարհած արտով գիմել Berlin, Verlagshandlung R. Prager, № 7.

Հ. Ս. ԵՓՐԻԿԵԱՆ

Պատկերագրող քննաշխարհիկ քառասուն Այս հոյակապ գործին հ. պրակի ալ հրատարակուած է: Ա. պրակի զարգարուած 80 պատկերներով: Բ. պրակի զարգարուած 91 պատկերներով: Իւրաքանչիւր պրակի համար օգտակար թէ 3 ֆրանք:

Հասցէ

Imprimerie Armenienne St. Lazare (Italie) Venise

ԽՄԱՍԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՏԱՇԷՍԻ

Կը սպաղարուին ամէն լեզու այցեատմա, հասցեատմա, նամակադրութիւն, հարաւանկան հրատարակիչ, մահադէ:

Գիմելը յոյժ գիւրամատչելի: Աւրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՉԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՔԻ

Отговорникъ: Дръ МѢГХРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.